




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

<p>Հաստատված է ՀԱԱՀ ժողովրդական կոորդինացիոն կենտրոնի կողմից «06» 02 . 2015 թ. (ամս. № 2)</p>	<p>Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր  Վ. Թարվերդյան «06» 02 2015 թ.</p>
---	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

## Նշանակություն և կիրառման ոլորտ

Մույն ընթացակարգը նախատեսված է ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) և այլ ստորաբաժանումների համար՝ համալսարանի կողմից արտերկրից ուսանողների ընդունման և նրանց կրթությունը կազմակերպելու համար:

Արտասահմանցի ուսանողների կրթությունը կազմակերպելու նպատակն է՝ համալսարանի կայունության, ֆինանսական աղբյուրների բազմազանեցման, համալսարանի՝ միջազգային ոլորտում կապերի խթանման ապահովումը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին համալսարանի ինտեգրացումը:

### 1. Փաստաթղթային հենք

- ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր
- Արտաքին կապերի դեպարտամենտի կանոնադրություն
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր
- Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:

### 2. Ընթացակարգ

Արտերկրից ուսանողներ ունենալու և նրանց համար կրթություն ապահովելու նպատակով ձեռնարկվող քայլերն են.

ա) Համալսարանի պատրաստվածության ուսումնասիրում, վերլուծություն և արդյունքների ամփոփում: Վերջնական նպատակն է՝ բացահայտել այն մասնագիտությունները, որոնցով հնարավոր կլինի դասավանդել օտար լեզվով:

- Ուսումնասիրել Համալսարանի բոլոր ֆակուլտետների և ամբիոնների՝ անգլերեն լեզվով դասավանդման հնարավորությունները;
- Ուսումնասիրել Համալսարանի ռեսուրսային բազան՝ օտարալեզու ուսանողների դասընթացների կազմակերպման տեսակետից:

բ) Թիրախային մասնագիտությունների գծով օտար լեզվով դասընթացներ փաթեթի կազմում և ներկայացում ԿԳՆ (ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր և բնութագրեր, օտար լեզվով դասավանդող դասախոսների տվյալներ և այլն):

գ) Այն երկրների ուսումնասիրություն, որոնց կարող են ուսանողների պոտենցիալ աղբյուր հանդիսանալ Համալսարանի համար:

- Ուսումնասիրել այն երկրները, որտեղ Համալսարանում թողարկվող մասնագիտությունները պահանջված են և մրցակցային:

- Պարզել տվյալ երկրներում ՀՀ-ում տրվող դիպլոմների փոխձանաչման խնդիրները:
- Տվյալ երկրներում գործող կրթական գործակալների հոտ կապերի հաստատում, որոնք զբաղում են դիմորդների հավաքագրմամբ:

### 3. Կրթության որակի ապահովումը

Կրթության որակի ապահովման նպատակով անընդհատ կազմակերպել լսումներ, հարցումներ ներքին շահակիցների, այդ թվում նաև՝ օտարազգի ուսանողների շրջանում: Բարցրացված խնդիրներն ու հարցերը քննարկել և տալ դրանց լուծման մեխանիզմները (ՊԻՄԲ շրջափուլին համապատասխան):